

ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ Ներկայ 1897 տարեշրջանի Պոռթկաբերդի համար տարեկան 10ֆր " " 1/2 " 5 " Արտատպարանի համար " 12 " " " 1/2 " 6 " Կանխիկ վճարելի	Նախակ դրամ եռսյուն խրկել հետեւեալ հասցեով ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ԿԱՌԱՎԱՐԻԱ Редакция на вѣстникъ „Ирaвункъ“ ВАРНА (България).	Rédaction du journal „Iravounk“ VARNA (Bulgarie)	Խմբագրութեան ուղղեալ գրութիւնք ետ չեն դրկուիր եւ յարմար դատ- նաճանքն միայն կը հրատարակ- ուին ամբողջովին կամ մասամբ: Շրանոցմանց տողը 20 սանթիմ. երեքէն աւելի անգամներու համար 20 առ 100 գեղջ կը լինի:
---	--	--	--

ԶԻՐԱՐ ՀԱՍԿԱՆՔ

Հանրային գործերու փորձառու-
թիւնը եւ մանաւանդ մեր երկպա-
ռակութեանց ուշադիր գննութիւնը
կը սորվեցնեն մեզ թէ շատ խնդիր-
ներու մէջ մեր վէճերն ու կռիւ-
ները նոր աստիճանի մը կը
ստանան՝ հակառակ կողմերու իրա-
րու նկատմամբ տաժաժ կասկած-
ներով, որոնք յաճախ անհիմն են:
Որքան կը քեր պիտի հանգար-
տէին, որքան վնասներէ զերծ պի-
տի մնայինք, եթէ երկպառակու-
թեան մը միջոցին համակարծիք
անձեք իրարու չվերագրէին լոկի-
րենց երեւակայութեան մէջ գոյու-
թիւն ունեցող չար խորհուրդներ
եւ ազգայնաբանութիւն, հակամէտ ըլ-
լալով միշտ չարաչար մեկնելու ի-
րարու խօսքեր եւ շարժումներ:
Եթէ եսութիւնը, որուն ամէն
մէկ քայլափոխի եւ ամէն ժամա-
նակ կը հանդիպինք մեր ազգային
կեանքին մէջ, ներքէ մեզ հան-
րային գործունէութիւնը անձնա-
կանութենէ զատել եւ հետեւապէս
ազգային խնդրի մը մէջ իրարու
հակակարծիք գտնուած ժամանակ
մեր անհատական յարաբերութիւն-
ները իրարու հետ շարունակել ան-
փոփոխ, շատ թիւրիմացութիւն-
ներ պիտի վերնային մէջտեղէ յօ-
գուտ ազգին:

Բայց եսութիւնը ուղիղ բանա-
վարութեան բարեկամ չէ. կը սի-
րէ ընդհակառակը մոլորեցնել դա-
տողութիւնը, որովհետեւ այդ է
իր հաշիւներուն համար նպատա-
ւորը. եւ ասոր հետեւանքն է որ
մեր մէջ անձնական յարաբերու-
թիւններէ բխած կիրք եւ ոյս կը
փոխանցին ազգային գործերու
ասպարէզը, երբ կը յուսան այն-
տեղ աւելի յագուրդ ստանալ, եւ
փոխադարձաբար՝ ազգային գոր-
ծերէ ծագում առած հակառակու-
թիւններ միշտ կը սիրեն երթալ
սպրդել անձնական գործերու եւ
անհատական յարաբերութեանց
չըլանակին մէջ: Խառնի խառն
չփոթութիւն մըն է կը ծագի տա-
կէ. ալ կարելի չըլլար զիրար հա-
կընալ. թիւրիմացութիւնները կը

բարդուն, կասկածները կը շա-
նան, կիրքերը կը բորբոքին եւ
ազգին վնասը կը դառնայ անխու-
սափելի:
Եսը տարած է արդէն այդ պա-
հուն իր յաղթանակը եւ այնքան
աւելի կը խայտայ, որքան մեծ ըլ-
լան իր ոտքերուն ներքեւ փռուած
զոհերը, ազգային շահերը:
Մինչեւ ե՛րբ պիտի տանք այդ
զոհերը. մինչեւ ե՛րբ պիտի շարու-
նակենք զոհուել մեր կիրքերուն.
յաւիտենական, անփոփոխելի դա-
տակներ մըն է որ զարնուած է
մեր ճակտին վրայ եւ դատապար-
տած է մեզ երբեք գթութիւն-
ներէ ազատ չմնալ, ոչ միայն
կարծիքներու եւ ձգտումներու տար-
բերութեան հետեւանքով, այլ եւ
իրարու կասկածոտ աչքով նայելով
անանկ պարագաներու մէջ ալ, ուր
հաշտ ոգիով մը փոխանակուած
երկու խօսք թերեւս համարաչափ-
ութիւն պիտի գոյացնէր հակառա-
կորդ կարծածներու միջեւ:
Ինքզինքնիս չխաբե՛մք. կե՛ղծ
է այն ազգասիրութիւնը, որով ա-
մէնքս ալ կուզենք պարծնել, սուտ
է այն հայրենասիրութիւնը, զոր
իւրաքանչիւր հայ իրեն կը վերա-
գրէ այսօր. ցոյցիւր են լոկ տառնք
եւ պիտի մնան, ցոյցափ իրարու
հանդէպ չկատարենք զիջողութիւն-
ներ եւ չլանանք նոյն իսկ գթու-
թեանց մէջ իրարու մերձեցնելով,
զիրար համոզելով ծառայել հան-
րութեան օգտին:

Անօրինակ ցաւերով լի մեր արդի
վիճակին եւ Հայաստանի խորքէն
եկած սոսկալի լուրերուն վրայ խո-
կալով յուզուելը եւ նոյն իսկ ար-
տասուելը միայն բաւական չէ եւ
ազգասիրութեան անխաբան մըն
ալ չկրնար սեպուել չղային ընդ-
հանուր տկարութեան այս ժամա-
նակին մէջ:

Ազգասիրութիւնը զոհողութեամբ
կըլլայ. ոչ միայն նիւթական, այլ
եւ բարոյական զոհողութեամբ, մա-
ւանդ մեզ պէս մարդերու համար
որոնք օտար բռնապետութեան մը
անբարոյականացնող լուծին ներքեւ
բնականաբար բարոյական նոր ախ-
տերու ենթարկուելու կամ, իրենց
արդէն ունեցածները զարգացնելու

այնքան յարմար ասպարէզներ գը-
տել են:
Բարոյական զոհողութիւնը մեր
ազգայնապաշտութեանց ու եսա-
կան ձգտումներուն հակառակ,
գործելն է ինչ որ հանրութեան
շահերը կը պահանջեն եւ ինչ որ
մեր խիղճը կը թելադրէ մեզ:
Եթէ տակաւին ընդունակ չենք
ասանկ ընդհանուր բարեշրջումի
մը, որ տակաւ միայն կրնայ կա-
տարուիլ, չենք կրնար սա չափը
ընել որ ազգային գործերու վե-
րաբերող անհամաձայնութեանց մէջ
չխզենք մեր յարաբերութիւնները
իրարու հետ, ճշգրէք անհամա-
ձայնութեան էական կէտերը, ու
րով գաղափար մը ունենանք հա-
կառակ կողմերու պահանջումե-
րուն վրայ, որպէս զի գոնէ իրա-
րու չվերագրենք անտեղի եւ անգոյ
դիտումներ եւ գիտանք թէ իսկա-
պէս ի՞նչ կուզէ այս կամ այն կու-
սակցութիւնը:
Հասկնա՛ք զիրար. ասով կ'ան-
հետանան շատ թիւրիմացութիւն-
ներ իրենց վնասակար հետեւանք-
ներով:
Իսկ եթէ այսքանն ալ չընենք,
ի՛նչ պիտի ընենք ուրեմն եւ ի՛նչ
բանի պիտի ծառայէ մեր հայրե-
նասիրական ցոյցարարութիւն. ի-
րարու դէմ միշտ եւ անպայման
պայքար մղելու—ամօ՛թ է ալ:

ՈՐԲԱՆՈՑՆԵՐ

Բ.

ՄԻՍԽՈՆԱՐԻ ՈՐԲԵՆ

Բոլոր որբանոցները, որ հրա-
պարակի մէջ քննութեանց նիւթ
են հիմա, միսխոնարական վար-
չոքներուց տակ կը գտնուին. ա-
մէնն ալ, Քրիստոսի սիրուն հա-
մար, մեր որբերուն կը խոստանան
պատասպարան, հաց ու լաւ. եւ,
այդ նիւթական անհրաժեշտ պէտ-
քերուն հետ կամ ատենցմէ վեր՝
միսխոնարական ոգին, որ իրենց
քրտինքին գերագոյն վարձքը պի-
տի ըլլայ:
Որբանոցներուն մէջ, գլխաւո-

րաբար, երեք կէտ քննադատելի
է ըստ իս.
1. Միսխոնարական ոգին:
Չէ կարելի ըսել թէ միսխոնա-
րական բոլոր վարժարանները մեզի
վնասակար եղան. խարբերդի Այն-
թապի, Մարդուանի գոլէժները
արդիւնաւոր եղան. եւ, այդ կըր-
թարաններու շնորհիւ, մեր երկ-
րին մէջ մուտ դտաւ անգլիական
լեզուն, եւ բնականաբար, Շէյքս-
բիրի, Պալսթրի եւ Սքէնսէրի գրա-
կանութիւնը, Ասիկա բախտաւո-
րութիւն մը եղաւ ազգին, եւ մի-
սխոնարները տեսան որ իրենց ու-
նեցած ոգիին ջերմութեանը տակ,
ազուոր, կարող, ընդունակ սե-
րունդ մը կը պատրաստուի՝ աւելի
հայրենասէր, աւելի հայացած:
Եւ սակայն՝ այդ գոլէժները որ-
բանոցնէր չէին. հայ տղան իր
փորը կը կշտացնէր մայրե՛նի յար-
կին տակ. հային ու լաւթին ան-
հրաժեշտ պէտքէն մղուած չէր ա-
նոնց սառ գիրկը նետուելու հա-
մար: Դպրոցներուն մէջ, առ
առաւելն, մանր մունր պարտակա-
նութիւններ կային, որոնց ենթա-
կուած էր, — ընդհանուր աղօթքի
եւ մասնաւոր բանախօսութեան մը
ներկայ գտնուիլ: Բայց հայ տղան
ո՛չ աչքերը փակելու ստիպուած էր
եւ ո՛չ ալ սիրտը գոցելու. իր գըպ-
րոցական կեանքին մէջ քանի մը
վայրկեաններ էին որոնք, առլի օ-
րերու մէջ բռնաքարշ, իսկ հետզ-
հետէ բոլորովին կարեւորութենէ
զուրկ:
Ասոնց հետ դիտելի է նաեւ որ
հայ տղան իրիկունը հօրը տունը
կը դառնար, ընկերներ ունէր,
մանկական-պատանեկան ահագին
աշխարհ մը, որ տեսակ մը իրե-
րակրթական վարչութիւն է: Իսկ
ոտքերուն տակ ու սրտին վրայ
հայրենի երկրին հ զը, որ իր ան-
խօս լեզուն ունի, եւ, տղուն աս-
տիճանական զարգացմանը հետ,
հետզհետէ աւելի յստակ եւ որոշ
իր բարբառը լսելի ընել կուտայ:
Հողին ազգեցութիւնը մարդուս
կրած սակորին ու կաշիին պէս
բան մըն է. անկէ ուժ մը կը բըղ-
խի որ զօրութիւն է երակներուդ
մէջ: Մ'եր Սրշակ Բ.ի համար կը-

սէ ազգային աւանդութիւն մը թէ երբ, Պարսկաստան գտնուած ատեն, Շապուհի հրահանգով պատ-
րաստուած վրանին տակ, հայրենի
հողին վրայ կը նստէր, առիւծ կը
գառնար և կրակ կը տեղարար ար-
քայից-արքային գլխուն, իսկ երբ
ուրիշ վրանի մը տակ՝ Պարսիկ հո-
ղին վրայ կը նստէր, հեղիկ գառ-
նուկ մը կը լլար առիւծը: Այդ ա-
ւանդութիւնը, հողին արժէքը բա-
ցատրելով, մեզի կը հասկնայէ ա-
նոր կենսականութիւնը: Հայրենի
հողին այդ կենսականութիւնն էր
որ հակառակէն կազդէր մեր մի-
սիոնարական սաներուն, և միսիոն-
արական ոգին, իր հակայական
ուժովը, կռնակին վրայ գետնիւր
փռուեցաւ:

Եւ սակայն փոխուող մը կար-
միսիոնարները փոխուեցան մեր հո-
ղին, մեր շուրթին և մեր աստղե-
րուն տակ: Հէնց ատոր ուղղակի
հետեւանքն է որ միսիոնարները,
մարդասիրական աւելի լայն հայ-
եացքով մը, մեր արիւնի և մա-
հացուցիչ-դէպքերուն մէջ, եղբօր,
մօր, քրոջ ու ծնողքի պէս հառան
ուր որ կրնային: Եւ հիմա ալ
երբ Երեսուցէի և Պոլսոյ Պատ-
րիարքներուն քննարկի պատաս-
խաներ կուտան իրենց ամենամօ-
տիկ արքանոցները, անդին հի-
ռուն, շատ հեռուն, կարինի,
Քարբեղի և ուրիշ տեղեքու որ-
բանոցներու համար կը գրուի թէ
շատ աղին կը գտնուին. միսիո-
նարները, Պոլսի Պատրիարքարա-
նի շրջաբերականին վրայ, յօժա-
րութեամբ միջոց տուած են որ ի-
րենց պատասխարաններուն մէջ հայ
որբերը սովորին իրենց լեզուն,
պատմութիւնն ու եկեղեցին, և ա-
զօթքի երթան կանոնաւորապէս:

Հ.

ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Մարդ մը որ իր պար-
տականութեան գծած սահմանէն
գուրս բան մը կընէ որ օգ-
տակար կըլլայ մէկ կամ մէկէ
աւելի անձերու, նոյն իսկ հան-
րութեան, կըլլայ անձնուէր: Այս
զգացում ոչ կրթութեամբ ձեռք
կը բերուի, ոչ փորձառութեամբ.
Ճնած ատենդ ունենալու ես գայն.
եղքէն չստացուիր: Որչափ ճիգ
ընես, չես կրնար անձնուէր հան-
դիսանալ, արեանդ մէջ այդ ըզ-
գացման հիւլէները բացակայ ըլ-
լալով: Ասիկա այնքան աղին ըզ-
գացում մըն է որ եթէ մարդկու-
թեան մէկ աննշան մասն ալ ու-
նենար գայն, թերեւս հիմակ հիմ-
նովին տարբեր երեւոյթով մը
ներկայանար աշխարհը: Այս յատ-
կութեան մեծութիւնը հոն կը
կայանայ որ անձնական ամեն
շահ առաքելը կըլլայ ուրիշի
բարիքին համար:

Տարբերակչարարատութեամբ

մը, շատ քիչեր օժտուած են անձ-
նութեամբ: անանկ որ ճշմա-
րիտ անձնութեանը, իրեն և հա-
զուագէպ երեւոյթներ, ունեցած
են ու կունենան իրենց մասնաւոր
յիշատակութիւնը պատմութեան
մէջ, որպէս զի սելուզէ սերունդ
փոխանցուի իրենց անունը իբրեւ
գերազդէ միակ վարձատրութիւն:
Պարզ և անշուք մէկը, ժողո-
վարդի ամենէն ստորին խաւին
պատկանող, անձնութեան հի-
անալի ցոյցով մը կրնայ անմա-
հանալ: Շատ անգամ անձնուէր-
ները իրենց ողջութեանը կը վար-
ձատրուին ու կը փառաբանուին:
Ֆրանսայի մէջ Մոնթիոն անուն
մեծահարուստ մարդ մը ասկից
իբր մէկ դար առաջ պատկա-
ռելի գումար մը կտակած է, ու-
րուն մէկ մասը ամեն տարի կը
բաժնուի իբրեւ վարձ այն հա-
զուագիւտ էակներուն որոնք ի-
րենց անձը չարչարած են ուրի-
շինը խնամելու համար:

Կարծես հին ժամանակներու
մէջ այս չքնաղ յատկութիւնը ա-
ւելի յաճախ լոյն կը գնէր մար-
դոց սրտին մէջ: Քանի ծաւալ կը
ստանայ ու կը թանձրանայ քա-
ղաքակրթութեան անգոյրը, իր
կեղծ փայլին տակ անհետացնե-
լով զգացումներ որոնք իրենց
նախնականութեանը մէջ միայն
փնտռու են, անձնութեան բնազ-
դական դրդումն ալ այնքան մեղ-
մանալու, տկարանալու վրայ է:
Այս երեւոյթը ուղղակի կը հա-
մեմատի կեանքի պայքարին անսո-
կալաւուն և կիրքերուն ու մոլու-
թեանց բազմանալուն հետ:

Անձնութեան մէջ այս բա-
ռը ապշութեան հոմանիշ դար-
ձած է ժիւղ դարու այս վերջին
քառորդին մէջ, ուսկից շատ ա-
ւելի վեր կը մնայ կարծես՝ նախ-
նի ամենէն ամբարիշտ, ամենէն
եղիւնալից դարն իսկ: Ասիկայ
այն դարն է ուր մարդ ոչ միայն
անձնութեան չընէր — որուն
վրայ գաղափար իսկ չունի թե-
րեւս — հապա իր մարդկային պար-
տականութեան ամենէն տարրա-
կան պայմաններուն մէջ իսկ կը
թերանայ առանց խղճահարու-
թեան:

Երբ կը տեսնես չարագործ մը
որ կը յարձակի տկար մէկուն վը-
րայ զայն սպանելու համար,
մարդկային եղբայրակցութեան
պարտքը կը հրամայէ քեզ օգնու-
թեան հասնիլ անոր ու փրկիլ:

Թող անձնութեան գաղա-
փարը պարտականութեան ամենէն
ազնիւ ձայնն անգամ անարձագանգ
կը մնայ: Մարդկային ամբողջ
գանգաւորներ սուրով ու թնդա-
նով կը փնտրեն անզգած, ա-
նողորմ հանդիսատեսներու աչքին
առջիւ, ու և ոչ իսկ փոքր շար-
ժում մը՝ տկարին, հարստահար-
եալին օգնութեան հասնելու:

Ապետական զգացումներու աս-

տիճանական չարագործակ այս ան-
կումը մարդկային սեւը պիտի
տանի հասցունէ հանգրուանի մը,
ուր անբարոյութիւնը խոցալից
վէրքի մը տեսքով պիտի ներկայա-
նայ:

Անձնութեան վրայ խօս-
ուած ատեն անհնարին է լուռ-
թեամբ անցնիլ անոր մեր մէջ ու-
նեցած ծաւալին վրայ:

Այս զգացումը գլխաւորապէս
երեք տարբեր երեւոյթներով կը
ներկայանայ:

Ա. անկեղծ անձնութեան:

Բ. կեղծ անձնութեան:

Գ. ապարդիւն անձնութեան:

Պիտի քննենք թէ այս երեք
տարբեր անձնութեան ինքնեղծ զատ
կատ ինչ տեղ կը բռնեն մեր ազ-
գային կեանքին մէջ:

Ե.

ՎԻԳԹՈՒՐԻԱ ԹԱԳՈՒՅԻՆ

Այս պահուէս, Անգլիա՝ նմանը
քիչ տեսնուած շքով կը տեսնէ իր
սիրեցեալ թագուհիին վաթսուէն
ամեայ ազամանդեայ յորելիանը:

Լոնտոնի մէջ ուրախութիւնը և
ոգեւորութիւնը չափ ու սահման
չունին. անասպիկական պերճանք
մըն է ուր շուրջը կը շալտէ ա-
մեն փողոցէ, ամեն կէտէ: Եւ ու-
տանէն մեկնող այս ցնծալիք և
ուրախութիւնը կերկարի անվերջ կեր-
պով ընդարձակ կայսրութեան վը-
րայ, ուր արեւը երբեք մարը չի
մանար: Մարդկային միլիոնաւոր
կուրծքերէ սլացած խնդութեան
ազադակները միայն սրտաման
ձայնին հետ կրնան բաղդատուիլ:
Լոնտոնի մէջ այսօր հաւաքուած
բոլոր անգլիահայատակ երկիրնե-
րու ներկայացուցիչները, տարօ-
րինակ դէմքեր և տարազներ, հը-
մայուած աչքերով և սարսուռով
կը դիտեն ծովու վրայ խարսխած
անհամար զրահաւորներու պատկա-
ռոտ տեսքը և այն բոլոր մեծա-
գործութիւնները որոնք կը շեշ-
տեն իրենց յաղթողին անուրանա-
լի մեծութիւնը:

Եթէ վաթսուէն տարուան ժա-
մանակամիջոցին մէջ Անգլիոյ տե-
սած մեծամեծ գործերը աչքի առ-
ջեւ բերուին, Անգլիացւոց այս
տօնեքը, այս ուրախութիւնները,
կատարեալապէս կարգարանն:

1837 ին, երբ վիգթորիա դե-
ռատի տաճարութեամբ թագու-
հին գահը ելաւ, Անգլիա 24 մի-
լիոն բնակիչ ունէր. այսօր 40
միլիոն ունի կեդրոնի և 375 մի-
լիոն բովանդակ տիեզերքի մէջ:

Իր հանրային պարտքը որ
գահակալութեան սկիզբը 698 մի-
լիոն էր, այսօր 468 միլիոնի ի-
շած է: Իր զրոյշին առջեւ որ ով-

կիտի ամենէն հեռաւոր անկիւն
ներուն մէջ և ամենէն անառիկ
գաղաթեւերուն վրայ կը ծածանի,
ամեն մարդ կը խոնարհի պատ-
կառոտ զգացումով մը: Արուստ-
ներն ու վաճառականութիւնը
շատ քիչ մրցող ունին. երկաթ,
բամբակ և ամեն տեսակ մեքե-
նաներ ու պէս պէս արտադրու-
թիւններ, լաւագոյն տեսակէն,
աշխարհը ողողած են:

Այս փայլուն զարգացման մէջ
արժանիքի մեծագոյն բաժինը
անշուշտ բուն իսկ անգլիական
ժողովրդին կը պատկանի. անգլի-
ացի ամեն անհատ իր կարողու-
թեան և ընդունակութեան չա-
փովը նպաստած է հայրենեաց
մեծութեան: Անգլիացիք քիչ ան-
գամ յոյս կը դնեն ուրիշի վրայ,
ամեն ոք լուրջ, յարատեւ, և խո-
հական գործունէութեան կեդրոն
մըն է:

Հետեւաբար, յորելիանի փայ-
լուն հանգեաներով, անգլիական
ժողովրդը նոյն իսկ ինք զինքը
կը տօնէ, իր ազգասիրական գոր-
ծը, որ իր ամբողջ շքեղութեամբ
կը փայլի: Իրաւ է սակայն թէ
վահագնաւոր միշտ գիտցած է
Անգլիոյ ամենէն լուսամիտ, սուր
և հեռատես աչքերով օժտուած
ճշմարտապէս մեծ մարդիկ հրա-
ւիրել պետութեան գործերուն գը-
լուրը և միշտ գիտցած է հետե-
ւիլ այն շաղկին դոր կը պահան-
ջէր «Իրիտանական Շահ»։ Այդ
ուղիին հետեւելով է որ գիտցած
է իրեն հպատակութեան լայնա-
ծիր շրջանակ մը կազմել, հռով-
մայիցւոց կայսրութեան աւելի
գերազանց:

Թագուհիին սեւն ալ անշուշտ
մեծապէս նպաստած է գործերու
այս նպատաւոր շարունակման.
վասն զի ինք երբեք անձնական
բաղադրականութիւն մը չէ ունե-
ցած և ոչ ալ ներքին թշնամու-
թիւններ յարուցած է: Իրեն ա-
մուսնութիւնն իսկ որ կրնար խան-
գարել պետական գործերու նը-
րաշնակութիւնը, բնաւ տաղտկա-
լի դէպքեր չէ արտադրած, զի
թագուհին իր ամուսինը պայտե-
լով հանդերձ գիտցած է, առանց
իշխանին արժանապատուութիւնը
վերաւորելու, միշտ որոշ պահել
վահագնաւոր և կինը:

Թագուհին ընտանեկան ճշմա-
րիտ մօր տիպարն է Անգլիոյ մէջ
ամենէն սիրուած և պաշտուած:
Եթե անասուն և հինգ զաւակներ
և թոռներ ունի, որոնցմէ շատե-
րը այլ և այլ երկրաց վահագնե-
տեր են կամ մեծամեծ գիւրքեր
կը գրաւեն:

Անգլիացին՝ վերականգնող ազգ
մըն է, իր գրաւած երկիրները
իրմէ շատ զգոհելու առիթ չէն
ունենար. հաւաստութեան և ա-
նաշատութեան օրէնքն է զոր կը
սփռէ ամեն կողմ և բաւ է որ իր
իշխանութիւնը ճանչցուի, տիրա-
պետեալ ազգը կրնայ աշխարհի

ամենէն անգամ կեանքը անցնելու
ճարտարութեամբ, կեանքը, կործա-
նելու համար չէ որ քննարկուի
աշխարհակալութիւններ ըրած են
և կընեն. այլ, ապրեցնելու
զարգացնելու և շինելու համար,
թէ՛ կը շահին և թէ՛ կը շահեց-
նեն քիչ շատ. ամբողջ գանձեր
երեսան հանելու արտեսներ միայն
իրենք չեն տեսնուիր. Եւ այնչափ եր-
կիրներ գրաւելու համար Անգլի-
այիք ոչ շատ ծախքերու կը հան-
դիպին և ոչ զոհողութիւններու,
իրենց մասնաւոր դիտելով և մի-
ջոցները ունին որոնցմով կը յաղ-
թանակեն և որոց մէջ մեծ դեր
կը խաղան իրենց սրտմիտ հիւ-
պատանները. Ասոր համար է որ
վիզիթորիոս թագուհւոյն օրով
Անգլիա միայն մէկ լուրջ պատե-
րազ մը մղած է, այն է խորհի
պատերազմը. միւս պատերազմ-
ները իրենց մշտական հանգաման-
քին հակառակ աւելի ազդաւոր-
ներու նմանած են միշտ:

Եթէ տիրապետեալ ազգերու
մէջ դժգոհ մը կայ, այն ալ տա-
րաբախտ իրաւնտան է որ սակայն
շատ ջանքեր կընէ բրիտանական
լուծը թօթափելու:

Միայն կը ցուինք ըսելու թէ
Անգլիա և իր պատկառելի թա-
ղուհին, հակառակ իրենց մեծու-
թեան և հզօր դերքին, որ իրենց
վրայ մարդասիրական պարտք կը
դնէր ճշմարիտ ազգերը պաշտպա-
նելու, անտարբեր հանդիսատես-
ներ եղան հայկական շարժումին:

Այսպէս, աշխարհի պատմու-
թիւնը միշտ ամօթալի էլէր վե-
րապահած է նաեւ Ալպիանի պատ-
մութեան համար, սեւ կէտեր,
որոնք այնքան պիտի նսեմացնեն
զայն որքան հայկական կոտորած-
ներուն թարմ յիշատակը այս
հանգեաներու և լուսավառութեանց
փայլը:

Գրական-Արդարար

ՄԵՐ ԲԺԺԱԿՆԵՐԸ

Իրաւունք իր վերջին թիւերէն
մէկուն մէջ մասնաւոր յօդուած մը
հրատարակած էր այն հայ բժիշկ-
ներուն համար որոնք Մոֆիա եր-
թալով քննութիւն անցուցին և
արտօնութիւն ստացան բժշկական
պրոֆեսսոր ի գործ դնելու Պոլսկար
հողին վրայ:

Այժմ ներուի մեզ փոքր դիտո-
ղութիւն մը ընկու յիշեալ յօդ-
ուածի մէկ պարբերութեան մա-
սին թէ «իրենց արհեստին վէջ քիչ
շատ առաջացած են»: Ճշմարտու-
թիւնը այն է որ արտօնեալ վեց
բժիշկները արդէն Պոլսոյ մէջ տա-
րիներէ ի վեր բժշկութիւն ըրած
ըլլալով, փորձառութիւն ստացած
են ու ամեն մէկը իր միջազայրին
մէջ կարեւորութիւն գտած և
կարեւոր դերքի տէր բժիշկներ
էին, որոնք դժբախտ պարագա-

ներու բերմամբ ստիպուեցան զո-
հել տնօրէններու ընթացքին մէջ ի-
րենց վաստակած համբաւն ու
նպատակարար դերքն, ու գաղթա-
կանութեան հետեւի Պոլսկարիս-
ճարտար չաւերէնք որ իրենց ներ-
կայութիւնը ուժգին զարկ մը պի-
տի տար երկրին բժշկական մարմ-
նոյն և տեղացիք, մասնաւոր հայ
տարրը, մեծապէս պիտի օգտուին
անոնց փորձառութիւնէն. ասով
հայ բժիշկները ի թէ ոչ իրենց
պոլսական կարեւոր դերքը, գէթ
անոր մօտ վիճակ մը պիտի յաղ-
ղին ձեռք բերել այս պաշտանեան
երկրին մէջ:

Գաղով անասնաբուժ Տոբթ. Սի-
մոն Գիւլիսեանի, որ Պոլսոյ ար-
համարաբուժական վարժարանի պ-
ռաւին շրջանաւարտն է ու առա-
ջինն հանգիստացած և որ նոյն վար-
ժարանին մէջ միջբարձարանութեան
բարձրագոյն ուսուցիչ էր և օգ-
նական տնօրէնի, ու քանի որ երկր-
գործական նախաճարձութեան ար-
համարաբուժական տնօրէնի օգնա-
կան, ինքն ալ քիչ փախչականի մէջ
անշուշտ պիտի յաղորդէ իրեն, հա-
մար կարեւոր դերքեր չեն զոյգ-
կարելոյ մէջ շնորհաւոր ճշմարտ-
ութեան ու յաջողութեանը:

Հայ բժիշկներու վրայ խոստում
պահուն անհնարին է չիշել բնիկ
Ֆիլիպպի Պ. Կ. վարդապարտները,
Պոլսկար բանակին մէջ զինուորա-
կան պաշայ, որ այժմ Սոֆիա կը
գտնուի իրաւագիտական վարժա-
րանին ընթացքն աւարտելու և
զինուորական դատական պաշտօն
ստանձնելու համար:

Բոլոր այն բժիշկները որոնք
Սոֆիա գացին քննութիւն անցը-
նելու, երբէք չպիտի մոռնան վար-
դապարտներ իրենց հանգեզ ցոյց
տուած անպատմելի հոգածութիւնն
ու պաշտպանութիւնը: Իբրեւ ազ-
գեցիկ մարդ, այն երկրասարդ
պուլկարահայր ամեն ջանք թա-
փել է որպէս զի իր տարագիր ազ-
գակիցները արգելքներու չհանդի-
պին և գիւրութեամբ ձեռք բերին
արտօնութիւնը:

Արդիւնքը յայտնի է:
Պ. վարդապարտեան ի մօտայ
ձեռք կը բերէ իրաւագիտական
վկայականը: Յաջողութիւն կը
մաղթենք իրեն, ինչպէս նաեւ
փայլուն ու արագ առաջդիմութիւն
իր ընտրած բարձր ասպարէզին
մէջ:
Իրաւեկ

ՖԻԼԱՆՍԱ ԵՒ ՌՈՒՍԻԱ

Ֆրանսայի երեսփոխանական ժո-
ղովին անդամ Տիար Պաղի Ռու-
սիոյ մէջ ուղեւորութիւն մը կա-
տարելէ հետք, Բարիք վերադառ-
նալով իր տպւորութիւնները հրա-
տարակից էգլիս և Կոյուս լրագիր-
ներուն մէջ: Տ. Պաղի հետեւեալ
կերպով կը խօսի ֆրանսիական
բարեկամութեան մասին.

— Ռուսիոյ մէջ բնաւ համակրու-
թիւն չկայ Ֆրանսայի համար և
հասարակ ժողովարար ֆրանսացի-
ներուն անունը միայն լսած է, ու-
րիշ ոչինչ: Ռուս նախարարներուն
մէկ մասը միայն կոլմիսից է
ֆրանսական բարեկամութեան, իսկ
առաջնակարգ շրջանակներու մէջ
փափագ կը յայտնուի որ ֆրանսա
Գերմանիոյ հետ համաձայնի որ-
պէս զի Անգլիոյ Արեւելքի մասին
տաժած փառասիրական ձգտում
ները չլրջաւորեն: Այս կարգի տե-
ձեք արգանք միտմիտ քննարկ-
կրնար մինչեւ իսկ սա ֆրանսալ
թէ ֆրանսայի համար և զիպտա-
կան խնդրը շատ թեթեւ բան
մըն է: Արեւելքէն ինչորին
ծանրակշիւթեան քով: Եւ ամէ-
նէն գէշն այն է որ Բէթէրսպուր-
էի մէջ ոչ փայն տակաւին գոյու-
թիւն չունի ֆրանսական կառավ-
արութիւնը այլ և անոր պիտի
թիւնը հիմայ հարգեցուէ աւելի
չոյ վճարէ:

ԵՐՐՈՐԴ ՀԱՆՈՒՆԵՐԻՒ	
Քայանքները 1897 Մարտի ամս	Միւս
Միւս	Միւս
Մարտի ամսէն պատրաստ դրամ	179.20
Բարոյնէ գանձած անպատկ	93.00
Գումար	391.20
Եւ	Միւս
Ընդ. պաշտօնական բժիշկին	39.00
» » զեղապործին	68.00
» » մատակարարին	10.80
Հիւանդաց կաթի և կտորի	6.00
Դիւանական և գանձաւան ծախ- սեր, նորանգործագրելու պատ- րաստութեան եւ այլն	26.50
Ընկերութեան գանձապահին քով պատրաստ դրամ	243.90
Գումար	394.20

ԻՄՏԱՏ

Պու սելլէվհա իլէ Թունիս 7
թարիխի նուսրէմիլէ տէրճ իթ-
միշ օլտըրմըլ պէնտի մարսուլէ
միւհթածը նափոգա օլան մուհա-
ճիւր միլլէթտաշարմըլն էսամի-
սի Միս Ֆրայլէր թարաֆընտան
վարնատա միլթէշէքթիլ սալըզ
իւնէ գոմօսիօնընա իհալէ իտիլ-
տիկի վէ զէվաթը մէթէպէրէ
թարաֆընտան իւնէ թէճէմիւ-
սինէ թէշէպիւս օլընտըլընը
պիտիւրմիշ իտիլ:

Մէլքըլը իւնէ գոմօսիօնը ա-
զալըր ինկիլիլ լերալըրն շան-
թաւընը համիլէ օլան Միս Ֆրայ-
լէրին վարնատան մուֆարէթթի-
նէ գատար, իւնէ իշլէրինէ միւ-
տալէլէ իթմէքտէն կէրի չէքիլ-
մէզ իքէն, Միս Ֆրայլէրին կիթ-
մէսինտէ՝ ֆադիլլէրի պիքէս պը-
րագմամագ իշլէն սոյ ու զայ-
րէթլէրին տահա զիյատէ ար-
թըրմալըրը լաղըմ կէլիլ իքէն,

պիլ ևօլլէ իշտէն ևազալըրընը
սիլքմիշ օլմագ իշլէն՝ վարնատա
պաղը կէնճէրտէն միլթէշէքթիլ
Աղաթաթիւնամ ընկերութիւն իւ-
զէրինէ իշի եիլքէտիւպ, քէնտի-
լէրիտէ «իւնէ թօլմամագ թէ-
շէպիւս իտէճէկիլ վէ 3-4 կիւն
զարֆընտա սիլլէ 1000 ֆրանկ
գատար թէսլիմ իտէրիլ» տէ-
մէքլէ, շու աղըր եիլքիւ շիրքէ-
թիւն ումուզընա գոյմուշար իտի:
Մէլքըլը շիրքէթ՝ ֆուգարա
խաթմալըրը թէտալի վէ թէա-
յուշ իթմէք մագսէտի իլէ 3-4
սյտան պէրու վիճուտ պըլմուշ օ-
լուպ, էլան պիլ պէօյիլք գուվ-
վէթէ մալիլք օլմամըլը սէպէպլէ,
հիմայէպիլ Գիլլընպա պուլընան
պիլ չօգ խաթմալըրտան մատա
6-700 քիշիլ միլթէճալիլ ֆա-
դիլլէրք տալիլ խաթմէ վէ թէա-
յուշ իթմէք իզթիտարընա հայիլ
օլմուշաղը աշիլքտար Վուր:

Ֆադալիլ պաղը զալլէթիլ ֆէնճ-
լէրտէն միլթէշէքթիլ շու կէլլէ
շիրքէթ՝ ֆէլաքթիլ քէնտիլք-
ճէ միւհթէնին քաթիլ օլտըր-
մալը մահիլլէրի կէպիւպա ալլէրին
վէճէմիլլէ օլընմաղ ֆէրճէտէ
սէֆալլէթիլ վէ պիլք Վաղըմըն-
պէ կիւլլէրէլ արք. Լոթիլլէ օլտը-
լընը կէօլմէքլէ տէքիւհտէ վիթ-
տիլքէրէ վաղիլքէնին վէ իզթի-
տարընը մաֆէպիւտէ օլմագ
կիւլլէրէ պարի պիլլէր ալ գու-
լու էթմէք վէրմէք աղմիւտէ պու-
լընտը, 4-5 կիւնտէն պըրու շիր-
քէթմէն իթմէք թէվիլ օլընմագ-
տա իտէտէ, պու կիւնէ գատար
թէճէմիլլէ օլընտան իւնէնին միգ-
տարըրէք ալ օլտըլը հալտէ
պաղը սահիպի սէրվէթ միլլէթ-
տաշարմըլ թիւրք տաքէրլէրի-
նին թէտալիլ իշլէն թիւճար վէ-
քիլի Բէֆիլք պէյէ սարը սարը
նարօլիօնըր վէրմիշ իքէն պիլլիմ
ֆադիլլէրիլիլին աճըրգտան էօլ-
մէմէլլէրի իշլէն պիլ լօղմա էքմէք
լարտար իւնէ վէրմէքտէն իս-
թիւքիւպի իթմէքտէ պուլընըյօր-
լու:

Գարտաշարմըլը գաթիլ իտէն
ճանիլլէրէ իւնէ վէրիւպտէ, մաղ-
լում վէ մաղտուր ֆուգարալըր-
մըլտան եիլք չէվիլլէրլէր պիլ
ալ տիւլիւնմէլի տիլլէր: Շիմ-
տիլլէ գատար թիւրքէ թէպէսիւմ
իտիւպ, ալթուլըրը իլէ անիլլէրին
քէսէլլէրին տօլտուրմուշ օլան ա-
ղալար սօն գըրկընլար վէ վուգու-
աթլար էսնասընտա նէ՝ մուհա-
սէնաթ կէօրէպիլլէրէ. թիւրք-
լէր պուլըրտան հանկըրնըն
խաթըրըն սալալըր. աքսի օ-
լարագ Տրապիլլէն վէ Սիվա
գըրկընլարընտա էն զիյատէ թիւր-
քէ սէվիլլէրի օլանլար էն էվիլլէ
գուրպան կիթալիլլէր:

Պիլ ալ աղալըմ կէօլիւմիլլէր վէ
զուպըլմըլը. էթիւթըմըլտա
սէրմէսէր եիլքլէրճէ միւհթմէյ-
նին սաթին օլտըլըրը մահիլլէրի
կէպիլք, անիլլէրին թահամիլլէ օլըն-
մաղ տէրէճէտէ սէֆալլէրին վէ

(*) օրան վէ տճըգտան պոյկըն տիւ-
չէն եիւզէրճէ մահառնլարըն ֆի-
զան ու ֆիզահընա պիր ալ գու-
լադ վէրէլիմ. անլէր տախի պի-
զիմ էվլաալարըմըզ վէ հէմիլի-
լէրիմիլ տիրէր. էքմէք իսթէյօյ-
լար, պիր լօզմա էքմէք, էօլմէ-
մէք իչիւն

Պու կիւնլէրտէ Աղքատախնամ
ընկերութիւն պիր էլի իլէ ֆա-
գիլլէրէ մուսվէնէթ իթմէքտէ վէ
տիկէրի իլէ էհալիտէն իմտատ ու
իանէ պէքլէմէքտէ տիր. ետրտը-
մա շիթապան օլալլմ:

**ՊՈՒ ԿԻՒՆՔԻ
ԹԵԼԵԿՐԱՖԼԱՐ**

(Աժան Աղագանիք)

Կալկաթա, 13 Յունիս

Պիր Ռաթայա գարշը իթալէի
լիան օլընմասը սէպէպիլէ շէտիտ
իթիթիլալլար հուսուլա կէլտի.
զապլիլէ վէ բօլիպէր հհալլի
զապլիլէ իտէմէտիլէր, էվրոբալը զա-
պլիլէրին էքսէրիսի վէ ինկիլ-
թէրալը իքի մուհէնտիլէր ետրա-
լանալլար: Իսթիլալ տէվամ իթ-
մէքտէ տիր. գարընդըղըն էօ-
նիւնիւ ալմադ իչիւն ասքէր իսթէ-
նիլտի:

Սթանպօլ, 19 Յունիս

Մըսըրը իքի հաճըլար եուսուր-
ճադ խաթալըղընա թուլթուլը-
լար: Սըհհիլէ գօմօսիօնը՝ Պահըր
Ահմէր (Կարմիր ծով) ատալարըն-
տա պուլընան հաճըլարըն Գամա-
լան գարանթիխաընա նազլ օլըն-
մալարընը թահթը գարարա ալար.
վէ հաճըլարըն շիտաէյէ կիթմէ-
լէրինի մէնն իթտի:

Վիէննա, 19 Յունիս

Բօլիթիլէ Գօրէսթուսէնի պէ-
յանընա կէօրէ, Բրէնա Ֆէլտի-
նանտ հազրէթլէրի սազըն կիւն-
լէրտէ Բուսանիա գրալընը զիյա-
րէթ իտէճէք իթիլ:

Գաննա, 20 Յունիս

Իքի թապուր թիւք ասքէրի
Գաննայա կէօնտէրիլտի:

Ամիրալար ատանըն զրաաթ իչ-
լէրինի տախի քէնտի իտարէլէրի
ալթընա ալմադ թէտալիլինտէ պու-
լունըյօրլար:

— Թիւք ասքէրլէրինին Գաննա-
յա կէօնտէրիլմէլէրինտէն տօլալը
թիւք էհալիսի շիքեայէթ իթտի.
Ամիրալ Գաննէվարօ վալիլի զիյա-
րէթ իտուպ Ձէքլարիայը սէրիան
զապլիլէ իտիլմէսինի թապիլիլէ իթ-
տի:

Լոնտոն, 20 Յունիս

Կիրիտտէ օթօնօմի իտարէսինին
թէլէքիլ վէ թանդիլի իչիւն տիվ-
լէթլէր պէյնինտէ ճէրիան իտէն
միւզաքէրէլէրին կիւզէլ նէթի.

*) Իւչիւնի սահիֆէնին էն սօն 3 1/2
տաթըրը սէհլէն գիտտէ տիլիլմիլ տիր:

ճէլէր հուսուլէ կէթիլիլիլ օլտըղընը
ինկիլթէրա խարիճիլէ միւսթէշարը
Մ. Գըրգըն մէճիլսը մէպուստնա
պէյան իթտի:

— Սրաւնաւարըն Աթինատան
ալտըղը մալիւմաթա կէօրէ, Ֆրա-
սա վէ Ալմանիա տէվլէթլէրին
թահթը հիմայէսինտէ Եունանիս-
տանտա պիր մալիլէ գօմիսիօնը
թէլէքիլ օլմըլ տըր. մէքէրը գօ-
միսիօն հիւքիւմէթլին պալը վարի-
տալթընը քէնտի իտարէսի թահթը-
նա ալըպ թալմիլնալթը հարպիլիլ
էօտէյէպիլմէք իչիւն պիր իսթիլգ-
րազ թէէմլին իտէճէք տիր:

ԵՐՄԵՆԻ ԷՕՔՍԻԻՋԼԵՐԻ

Գերմանիանըն վիլհէլմտորֆ
գասապաաընտա վազը Գնապէն
ինսպիգուդը նամ եէթիլմիսինէտէ
(որբանոց) պուլունան էրմէնի էօք-
սիւզ չօճուզլարըն կէօնա կէօն թէ-
չէքիլլէրինի պէյան ի.ոէն պիր մէք-
թուպ կէչէնլէրտէ կազէթամըզա
տէրճ իթմիլ իտիք: Բիւզաւնդիոն-
տա օգուտըղըմըզա նազարէն մէք-
քիւր չօճուզլարըն թէչէքէլլէրի
Ս. Պատրիարքըն տախի նալարը
ալըգաթընը ճէլպ իթմիլ օլուպ,
մուսիլլէյ լազըմ կէլէն միւրաճա-
ալթը իթմիլ տիր: Մէսմուսթա
կէօրէ մէքէրը էթիլմիսինէնին ի-
տարէսի թարաֆընտան Ս. Պատ-
րիարքա վէրիլէն մալիւ.նաթա պի-
նաէն էրմէնի էօքսիւզլէրէ էրմէնի
լիսանը, ալգալին պատմութիւնը
վէ ֆրանսըզա էօյրէթմէք իչիւն
միլլէթլէրէվէրիլիլ վէ տիրայէթի
իլէ մաարուֆ տօսթլարըմըզտան
Պ. Յ. Գալանան միւտէրիլիս թա-
լին օլընմադ իչիւն պէրաի թէճ-
րիւպէ մուվազաթէն մահէլի մէք-
քիւրէ չաղըրըմըլ տըր:

Հէր հալտէ մէքգուժ վաթըն
էօքսիւզլէրիլիլ վէ ֆայիտէլի օլա-
ճաղընա պիլգէ չիւպհէ օլընմադ:

ՄԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Լոնտոնտան քէչիտէ օլընան
պիր թէլէկրաֆա կէօրէ, Պուկա-
րիա րրէնա վէ րրէնաէ հազարա-
թը էլիլէվմ Բարիլէ էթիլմիլ օ-
լաճաղար տըր:

Տէյլի Նիսին Սթանպօլտան
ալտըղը մալիւմաթա կէօրէ, Եու-
նանսթան վէ Թիւքիլա պէյնինտէ
միւսալէհէ հուսուլա կէթիլիլմէք
իչիւն սինօրլար թայիլի վէ թաղ-
միլնալթը հարպիլիլ մէսլէլէրի էլ-
չիլէր վէ Պապը Ալի պէյնինտէ
իթթիլֆազէն հալլ ալընմըլլար
տըր:

Թուրքիա քարանթիլնաընտա
պուլընան հաճըլարըն պազըլարըն:

տա կուսուրճադ խաթալըղը միւ-
չահ տտէ օլընմըլ տըր:

Սօֆիոյա կիթմիլ օլուպտէ, ա-
խիլէն Սթանպօլա տպէթ իտէն
թիւք էրքեանը հարպ վապիթա-
նը, Եըլտըղտա միւթէչէքիլ աա-
քէրիլէ գօմիսիօնըն տալթիլինէ
իճապէթլէ, Պուկարիանըն գուվ-
վէի ասքէրիլէսի հազգընտա մա-
լիւմաթ իսթէնիլմէսինէ ճէվապէն՝
Պուկարիա սէքիլ կիւն զարֆըն-
տա 200,000 ասքէր մուհարէպէ
հալլինէ գօյա պիլիլ օլտըղընը
պէյան իթմիլլէր տիր:

Պիր ալման կազէթաաընըն պէ-
յանընա կէօրէ պիր գաչ պին իս-
լամլար Ալպանիանըն չիմալ ճիհէ-
թիլնտէ թէճէմիլ օլընըպ, Թէ-
սալիանըն թիւքիլալա գալմալը-
նը վէ Ալպանիա էյալէթլինէ պիր
տէրէճէլէ գատար սէրպէստիլէթ
վէրիլմէսինի թալէպ իթմէքտէ ի-
միլլէր: Վէ պու մազաէտլէ Սուլ-
թանա պիր հէյիաթը մէպուսէ
եօլլալուպ թալէպլէրինին գապու-
լինէ տէկին տաղըլմիսաճաղարը-
նը պէյան իթմիլլէր:

Աթինատան քէչիտէ օլունան
պիր թէլէկրաֆ հիւքիւմէթտէն
վէրիլէն պիր րաբրթա կէօրէ
Թիսալիատա թիւքիլլէրին իճրա
իթտիլլէրի խապասէթտէն իլէրու
կէլէն խաաարաթ 4,376,500 օս-
մանը լիւսաընա պալիլ օլտըղընը
պիլաիլմիլ տիր:

ՔՆՆՈՒԹԻՒՆ

Վառնայի մանչիւրու ալգալին
վարժարանին տարեկան հալըա-
քնուլթիւնիլը պիտի սկսին յա-
ուսթիկայ երկուշարթի, 21 Յու-
նիս, ու պիտի տեւեն մինչեւ շա-
բաթ: Քննուլթիւնիլը որոնք բե-
րոնք բերանացի են, տեղի պիտի
ունենան կէս օրէն աուալ ժամը
9էն 12:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ստորագրեալա Հայրապետ Պ. Սար-
գիսեան, նկատելով որ նախկին
ընկերա Թ. Ջարեհ Պէչիլեան մինչեւ
հիմա չը սրբեր իմ անունա դապիլային
վրայէն որ կը գտնուի մաւաճառի
խանութին վերեւ Հայրապետ Պ.
Սարգիսեան եւ Թ. Ջարեհ Ս. Պէչիլ-
եան ֆիլմայով, ներկալիս կը յայտա-
րարեմ ի գիտութիւն արգոյ հասարա-
կութեան, թէ ես արդէն 1897 Մա-
յիս 20 էն դադրած եմ անոր հետ ըն-
կերարար գործելէ եւ չունիմ ու եւ է
առնչութիւն վերոյիշեալ խանութին
հետ:

Հայրապետ Պ. Սարգիսեան
Վառնա, 21 Յունիս 1897

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒՂԻ ԿՈՒՋՈՒԹԻՒՆ

Հայ պատուաւոր ընտանիք մը,
որ վառնա չի բնակիր, կը փնտտէ
մանկավարժուհի մը իր փոքր զաւ-
կին համար:

Փափագողք գիմն խմրագրու-
թեան:

Ի Խ Թ Ա Ր

Իչպս: Յունիս ալըն նիհայէ.
թիլնէ գատար ապօնէլէրիմիլտէն
հէր քիմ կազէթա պէտէլինի էօ-
տէմէմիլ օլուր իսէ բօսթահանէ
մարիֆէթի իլէ անլէրտէն թահսիլ
իթմէկէ մէճպուր օլաճաղըմըզը
չիմտիտէն իսթար իտէրիլ:

Ա. Ջ. Դ.

Ռուսանիոյ Ֆօքշան քաղաքի
Հայոց ազգ. երկսեռ վարժարա-
նաց համար կուզուի քաջահմուտ
հայկաբան ուսուցիչ մը եւ ուսուց-
չուհի մը, որք եթէ գիտնան նաև
գաղղիէրէն, նախագաս կը հա-
մարուին, առաջնոյն տարիքն ըլ-
լայ 30-35 եւ երկրորդինը 25-30:
Փափագողք գիմն հանգերձ
կարեւոր ծանօթութեամբք իմա-
սին իրենց անցեալ գործունէու-
թեան, առ Տիար

F. S. Ferhatian
à Focsani
en Roumanie

ՏՕՔՔ. Ե. ԹՈՎՄԱՍԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել արգոյ հա-
սարակութեան թէ վերադարձած է
Սոֆիաէ եւ կընդունի հիւանդներ ա-
մեն օր իր տունը ի Պալըք Բազար,
առաւօտները ժամը 10էն 12, իսկ կէս
օրէն վերջը 2էն 5: Ձորեքլարթի օրերը
կէս օրէն վերջը ձրիապէս կը գարմա-
նէ:

Ա. Ջ. Դ.

Իրաւունք կը վաճառուի նաեւ Օթէլ
Քօմէրիալին ներքեւ, Տ. Սանտալճեանի
ծխախոտի վաճառատան մէջ, ինչպէս
նաեւ Մուսալլաի հրապարակին վրայ.
Տ. Մկրտիչի սրճարանին կից, հայ
ծխալաճառ—սրճալաճառի խանութին
մէջ, նաեւ Մուսալլա Ապտիլլահման
մզկիթի դէմ Պ. Աւետիս Ջարբանէ-
լեան գրալաճառ—թղթալաճառի խա-
նութը:

Փափագողք կընան ամեն ատեն թերթ
գտնել այս երեք տեղերը:

ՏԻԿԻՆ ԹԸՆԿԻՐ

Բ. Թաղ. քիւ 822 (Տիպէկ չէլմէի
դիւնսցի փողոց)

Դիւրագոյն մէթոտով կը սորվեց-
նէ ձեւագիտութիւն եւ յանձն կառ-
նէ ասեղի աշխատութիւններ չա-
փաւոր գիմնրով:

Ա. Ջ. Դ.

“ԻՐԱՌԻՆՔ”Ի Վարչութիւնը
յանձն կառնու պատրաստել Հա-
յերէն, Պուկարիլէն, Յունաներէն
եւ Յունարէն լեզուներով ընկա-
լագրեր, հասցէներ, նամակադուլի-
ներ, մահազգեր, յայտարարու-
թիւններ, հարսանեաց եւ այլ հրա-
ւիրագրեր, այցաքարտեր են, են:

Գնիր չափաւոր

Փափագողք պարտին գիմն խմ-
րագրութեան հասցէին: